ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Վիճակագրորեն հանքարդյունաբերությունը և մետալուրգիական արդյունաբերությունը Հայաստանի Հանրապետությունում եղել և մնում են երկրի տնտեսության համար կարևոր ճյուղեր: Դրանց տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում, արտահանման ծավալներում, աշխատանքի շուկայում, ինչպես նաև պետական բյուջեում՝ հարկերի տեսքով շարունակում է լինել նշանակալից և ցուցաբերում է աճի միտում:

Մետաղների համաշխարհային պահանջարկի ներկայիս արագ աճող տեմպերի պարագայում էլ ավելի է կարևորվում այս ոլորտի կայուն և հավասարակշռված զարգացումը, քանի որ մետաղական ռեսուրսներն ընդերքում սահմանափակ և հյուծվող են, իսկ մետաղների արդյունահանմամբ և վերամշակմամբ պայմանավորված բնությանը հասցված որոշ վնասներ անդառնալի են էկոհամակարգի համար:

Միևնույն ժամանակ մետալուրգիական արդյունաբերությունն ունի տնտեսական և բնապահպանական խնդիրներ, որոնք հիմնականում կապված են երկրից մետաղական հումքի կամ կիսապատրաստուկների արտահանման և բնությանը մետալուրգիական գործունեության հասցրած վնասների հետ:

Արտադրական ավարտուն շրջափուլի բացակայությունը զրկում է ՀՀ-ին մակրո և միկրո մակարդակներում տնտեսական և սոցիալական զարգացման պոտենցիալ աճից:

Ոլորտի խնդիրների բացահայտումը և դրանց լուծմանը նպաստող հասցեական տնտեսական քաղաքականության մշակումը կբերի Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական արդյունաբերության զարգացմանը և համաշխարհային շուկայում ՀՀ-ի դիրքի բարձրացմանը: Վերոգրյալով է պայմանավորված հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության մետալուր¬գիա-կան արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների մշակումն ու նախանշումը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել Հայաստանի մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա հիմնախնդիրները,
- վերլուծել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները,
- գնահատել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման նշանակությունը, տեղը, դերը, զարգացման հանքահումքային հենքը,
- վերլուծել համաշխարհային և հայրենական մետալուրգիական շուկայի կայուն զարգացման ժամանակակից միտումները և կանխատեսումները,
- հարցը դիտարկելով ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման միկրո և մակրո միջավայրերի մակարդակներով՝ բացահայտել ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, առկա հիմնախնդիրները, լուծման արդյունավետ ուղիները,

- մշակել մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների կայուն զարգացումը բնութագրող համալիր ցուցանիշ՝ կայուն զարգացման ինտեգրալ ինդիկատոր,
- բացահայտել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնական ուղղություններից մեկի՝ պղնձի արտադրության կազմակերպման էկոլոգիատնտեսական հիմքերը, հիմնական խոչընդոտներն ու խնդիրները և առաջարկել դրանց լուծման կոնկրետ և միջազգային պրակտիկայում արդարացված լուծումներ,
- իրականացնել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության (մետաղների համալիր կորզմամբ) ծրագրի տնտեսական գնահատում, հաշվարկել ծրագրի կանխատեսվող մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
- մշակել մաքուր մետաղի և դրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանման նպատակով ավելացված արժեքի հարկի փուլային բարելավման ուղի,
- զարգացման իրական հնարավորություններ ունեցող արտադրությունների ուղղությունները դիտարկել որպես մեծ ավելացված արժեքներ ստեղծող մետաղական շրջափուլի ավարտուն փուլ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը և կիրառությունը,

ատենախոսության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնահարցերը և ժամանակակից միտումները» գլխում հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման անհրաժեշտությունը, ներկայացվել է ոլորտի գլոբալ և մակրոտնտեսական դերն ու նշանակությունը, վերլուծվել են մետալուրգիական արդյունաբերության հիմնական տնտեսական ցուցանիշները, ինչպես նաև ուսումնասիրվել են ոլորտի կայուն զարգացման տնտեսական, սիցիալական և բնապահպանական բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա իրավիճակի ուսումնասիրություն» գլխում կատարվել է մետալուրգիական արդյունաբերության վերլուծություն ըստ տարբեր առանցքային նշանակության մետաղների (մոլիբդեն, ոսկի, պղինձ), ինչպես նաև վերլուծվել է ՀՀ ներկրվող և տեղում վերամշակվող մետաղների արդյունաբերության վերլուծություն: Գնահատվել է ոլորտի արդի վիճակը և զարգացման նախադրյալները: Ներկայացվել են կայուն զարգացման ինդիկատորները և մշակվել է ՀՀ մետալուրգիական ձեռնարկությունների և արդյունաբերության կայունությունը գնահատող ինտեգրալ ինդիկատոր:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման հիմնական ուղիները» գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման պղնձի արտադրության գործոնը: Առաջարկվել է ոլորտի հենքի վրա վերջնարտադրանքի ու դրանից բխող արտադրությունների զարգացմանը միտված հարկային քաղաքականության մեխանիզմ: Ներկայացվել են նորագույն պրակտիկայի կիրառմամբ ոլորտի կայուն զարգացման և բարելավման ուղղություններ:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները ներկայացված են ստորև.

- մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների կայուն զարգացումը բնութագրող համալիր ցուցանիշ՝ կայուն զարգացման ինտեգրալ ինդիկատոր,
- հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պղնձի արտադրության շեշտադրությամբ, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի (մետաղների համալիր կորզմամբ) տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
- առաջարկվել է ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման հիմնական էկոլոգիատնտեսական խոչընդոտներից մեկի՝ ծծմբի իրացման մարքեթինգային լոգիստիկ խնդրի իրատեսական լուծում,
- հիմնավորվել է ՀՀ-ում մաքուր մետաղի և դրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային արտոնության սահմանափակման նպատակահարմարությունը և առաջարկվել է ԱԱՀ-ի բարելավման փուլային ուղի:

Վերլուծված հիմնախնդիրների համար առաջարկված ուղիները կարող են ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, մետալուրգիական ընկերությունների կողմից՝ ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացումն ապահովելու նպատակով: Պղնձի արտադրության ծրագրի տնտեսական և բնապահպանական խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ծծմբի իրացման մարքեթինգային-լոգիստիկ

առաջարկությունը կարող է հետաքրքրական լինել ծրագրով հետաքրքրվող ներդրողներին:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախուսության 137-րդ էջում հեղինակը նշում է համապատասխան մեխանիզմների կիրառման անհրաժեշտության մասին, սակայն չի նշում, թե կոնկրետ ինչպիսի մեխանիզմներ են պետք և որ դեպքերում դրանք կիրառելի կլինեն:
2. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող սուբյեկտների ցանկում առաջարկվող փուլային փոփոխությունները ենթադրում են լրացուցիչ ուսումնասիրություն, քանի որ առաջարկվող փոփոխության դեպքում հանքաքար և խտանյութ արտահանող ընկերությունները հնարավոր է ունենան ֆինանսական խնդիրներ:
3. Հետազոտության 3.4. բաժնի ուսումնասիրություններում, որը նվիրված է ՀՀ-ում մետալուրգիական նորագույն և ապագայական տեխնոլոգիաների կիրառման ուղղություններին, կենսատարալվացման տեխնոլոգիաների բնության վրա ունեցած ցածր ազդեցության, էներգոարդյունավետության գնահատականի հետ մեկտեղ նպատակահարմար էր ավելի լայն ներկայացնել բացասական կողմերը:

Եզրակացություն

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները, այլ նպատակ ունեն բարելավելու ատենախոսի հետագա ուսումնասիրությունները:

Սասուն Մյասնիկի Բախշյանի ատենախոսությունն ունի արդի գիտագործնական արժեք, այն համակողմանի, ինքնուրույն և գրագետ հետազոտություն է, որում դրված և լուծված են հանրապետության տնտեսության զարգացման համար էական նշանակության խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 11 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է

ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու՝ **Ա. Ա. Մկրտումյան**

Պարոն Ա. Ա. Մկրտումյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
«Լեռնամետալուրգիայի Ինստիտուտ»
Կադրային ծառայության պետ **Է. Ա. Իվանյան**

18.12.2023